

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական ծառայության հարցերով դատական գործընթացների վերաբերյալ, որոնց Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը ներգրավվել է 2008-2017 թվականներին

2008 թվականին ընթացքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) ներգրավվել է քաղաքացիական ծառայության հարցերով **11** դատական գործընթացում: 4 դատական գործով վճիռները կայացվել են հոգուտ քաղաքացիների, 4 դատական գործով՝ հոգուտ Խորհրդի, 3 դատական գործ գտնվել է ընթացքի մեջ:

2009 թվականի ընթացքում Խորհուրդը ներգրավվել է քաղաքացիական ծառայության հարցերով **8** դատական գործընթացում (այդ թվում՝ 2008 թվականին չավարտված 3 դատական գործընթացում): Բոլոր 8 դատական գործով վճիռները կայացվել են հոգուտ Խորհրդի:

2010 թվականի ընթացքում Խորհուրդը ներգրավվել է քաղաքացիական ծառայության հարցերով **4** դատական գործընթացում: 1 դատական գործով կայացված վճիռով հայցը բավարարվել է մասամբ հոգուտ քաղաքացու, 3 դատական գործով վճիռները կայացվել են հոգուտ Խորհրդի:

2011 թվականի ընթացքում Խորհուրդը ներգրավվել է քաղաքացիական ծառայության հարցերով **6** դատական գործընթացում: 2 դատական գործով վճիռները կայացվել են հոգուտ Խորհրդի, 4 դատական գործ գտնվել է ընթացքի մեջ:

2012 թվականի ընթացքում Խորհուրդը ներգրավվել է քաղաքացիական ծառայության հարցերով **5** դատական գործընթացում (այդ թվում՝ 2011 թվականին չավարտված 4 դատական գործընթացում): Բոլոր 5 դատական գործով վճիռները կայացվել են հոգուտ Խորհրդի:

2013 թվականի ընթացքում Խորհուրդը ներգրավվել է քաղաքացիական ծառայության հարցերով **2** դատական գործընթացում, որը գտնվել է ընթացքի մեջ:

2014 թվականի ընթացքում Խորհուրդը ներգրավվել է քաղաքացիական ծառայության հարցերով **4** դատական գործընթացում (այդ թվում՝ 2013 թվականին չավարտված 2 դատական գործընթացում): 2 դատական գործով վճիռները կայացվել են հոգուտ Խորհրդի, իսկ 2 դատական գործ գտնվել է ընթացքի մեջ:

2015 թվականի ընթացքում Խորհուրդը ներգրավվել է քաղաքացիական ծառայության հարցերով **7** դատական գործընթացում (այդ թվում՝ 2014 թվականին չավարտված 2 դատական գործընթացում): 1 դատական գործով վճիռը կայացվել հոգուտ քաղաքացու, 2 դատական գործով վճիռները կայացվել են հոգուտ Խորհրդի, իսկ 4 դատական գործ գտնվել է ընթացքի մեջ:

2016 թվականի ընթացքում Խորհուրդը ներգրավվել է քաղաքացիական ծառայության հարցերով **10** դատական գործընթացում (այդ թվում՝ 2015 թվականին չավարտված 5 դատական գործընթացում): 1 դատական գործով վճիռը կայացվել հոգուտ քաղաքացու, 3 դատական գործով վճիռները կայացվել են հոգուտ Խորհրդի, 6 դատական գործ գտնվել է ընթացքի մեջ:

2017 թվականի ընթացքում Խորհուրդը ներգրավվել է քաղաքացիական ծառայության հարցերով **8** դատական գործընթացում (այդ թվում՝ 2016 թվականին չավարտված 6 դատական գործընթացում): 1 դատական գործով վճիռը կայացվել հոգուտ քաղաքացու, 3 դատական գործով վճիռները կայացվել են հոգուտ Խորհրդի, 4 դատական գործ գտնվում է ընթացքի մեջ:

2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
11	8	4	6	5	2	4	7	6	8